«ԲԻԴԵՔ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

12 ամիս ժամանակահատվածի համար

2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

Երևան – 2020

«Բիդեք»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 3-62
3-62 Mamikonyanc, Yerevan, RA
Լիցենզիա ԱԾ N099
www.gaudit.am , info@gauditt.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենթարկել «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է

էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն Գ.Ղլթչյան

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ» «G & CO AUDIT GROUP» 00128775 ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ YEREVAN LIMITED LIABILITY COMPANY REPUBLIC OF ARMENIA

Աուդիտոր Ա.Չատինյան
Որակավորման վկայական թիվ 453

15 հունիսի 2020թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Բիդեք» ՍՊԸ
առ 31-ը դեկտեմբերի 2019թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31-12-19 Դ 000	31-12-18 Դ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	374,134	376,738
Ներդրումային գույք	4	152,025	163,300
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	138,322	-
Ոչ նյութական ակտիվներ		468	200
Հետաձգված հարկային ակտիվներ	6	2,490	1,194
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		667,439	541,432
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	1,148,236	373,388
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	244,272	145,929
Հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ		14,187	7,325
Ընթացիկ հարկային ակտիվներ		35	3,203
Տրամադրված փոխառություններ		6,000	4,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	2,039,515	437,225
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,452,245	971,070
Ընդամենը ակտիվներ		4,119,684	1,512,502
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	10		
Կանոնադրական կապիտալ		60	60
Չբաշխված շահույթ		317,480	177,430
Ընդամենը սեփական կապիտալ		317,540	177,490
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	560,367	227,136
Վարձակալության գծով պարտավորություններ	5	140,063	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		700,430	227,136
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	405,999	734,923
Վարձակալության գծով պարտավորություններ	5	4,322	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	2,682,944	366,563
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ		677	422
Ընթացիկ պահուստներ	14	7,772	5,968
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,101,714	1,107,876
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		4,119,684	1,512,502

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 31-ող էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:
Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՍՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2.6):

Տնօրեն
Գ.Ավետիսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
«Բիդեք» ՍՊԸ
2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2019 դրամ 000	2018 դրամ 000
Շարունակական գործունեություն			
Հասույթ	13	*1,462,219*	*1,613,927*
Ինքնարժեք	14	*(1,166,013)*	*(1,279,834)*
Համախառն շահույթ		296,206	334,093
Այլ եկամուտներ	15	*52,167*	*36,151*
Իրացման ծախսեր	16	*(6,849)*	*(2,941)*
Վարչական ծախսեր	17	*(61,406)*	*(48,787)*
Այլ ծախսեր	18	*(54,324)*	*(65,972)*
Գործառնական շահույթ		225,794	252,544
Ֆինանսական ծախսեր	19	*(83,589)*	*(40,717)*
Ֆինանսական եկամուտներ	20	*34,620*	*7,189*
Այլ ֆինանսական հոդվածներ		*1,721*	*2,192*
Շարունակական գործունեությունից շահույթ մինչև հարկումը		178,546	221,208
Ընդհատված գործունեություն			
Ընդհատված գործունեությունից շահույթ/վնաս		-	-
Շահութահարկի գծով ծախս	21	(38,496)	(45,764)
Տարվա շահույթ հարկումից հետո		140,050	175,444
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Սեփական կապիտալում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		140,050	175,444

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:
Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՍՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2.6):

Տնօրեն
Գ.Ավետիսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Բիդեք» ՍՊԸ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
			₽ 000
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2017թ.	60	140,515	140,575
Տարվա շահույթ	-	175,444	175,444
Շահաբաժիններ	-	(138,529)	(138,529)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2018թ.	60	177,430	177,490
Տարվա շահույթ	-	140,050	140,050
Շահաբաժիններ	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2019թ.	60	317,480	317,540

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՍՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2.6):

Տնօրեն
Գ.Ավետիսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Բիդեք» ՍՊԸ
2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2019-31.12.2019	01.01.2018-31.12.2018
	Դ՝ 000	Դ՝ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	4,048,851	2,247,284
Վճարումներ մատակարարներին	(1,960,660)	(1,752,772)
Վճարումներ աշխատակիցներին	(175,105)	(186,168)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ, այդ թվում՝	(155,144)	(151,503)
Ռեզիդենտների շահութահարկ	(39,793)	(45,116)
Այլ մուտքեր	134	-
Այլ ելքեր	(62,586)	(44,961)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	1,695,490	111,880
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառք	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(38,333)	(15,828)
Տրամադրված փոխառություններ	(98,500)	(139,000)
Տրամադրված փոխառությունների մարում	96,500	135,000
Փոխառություններից ստացված տոկոսներ	34,620	7,189
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(5,713)	(12,640)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վարձակալության գծով պարտավորության մարում	(8,316)	-
Ստացված վարկեր և փոխառություններ	520,000	907,008
Վարկեր և փոխառություններ մարում	(519,281)	(493,587)
Վճարված տոկոսներ	(79,890)	(41,875)
Շահաբաժինների վճարում	-	(138,529)
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(87,487)	233,017
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	1,602,290	332,257
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	-	6
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	437,225	104,962
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	2,039,515	437,225

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 10-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:
Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՍՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2.6):

Տնօրեն
Գ.Ավետիսյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընկերության գործունեության բնույթը

«Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Ընկերությանը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2009թ. Ապրիլի 15-ին: Պետական գրանցման վկայականի համարն է՝ 03 Ա 085065

Ընկերությունը կանոնադրական կապիտալը կազմում է 60.000 /Վաթսուն հազար/ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ վճարված է և պատկանում է միակ մասնակից Գառնիկ Ավետիսյանին: 2019թ փետրվար ամսվանից ընկերության 75% բաժնեմասի սեփականատեր է դարձել Դավիթ Սեդրակյանը:

Ընկերության ընթացիկ կառավարումն իրականացվում է գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրենի միջոցով:

Համաձայն կանոնադրության Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է՝

- Շինարարության իրականացում՝
  - բնակելի, հասարակական և արտադրական շինությունների
  - տրանսպորտային ոլորտում
  - հիդրոտեխնիկայի ոլորտում
  - էներգետիկայի ոլորտում
  - կապի ոլորտում
- Գործառնական վարձակալությամբ տարածքների տրամադրում:

Ընկերության կողմից գործառնական վարձակալությամբ տրամադրված տարածքները իրեն չեն պատկանում, այլ վարձակալված են «Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲԸ-ից և հանձնվում են ենթավարձակալությամբ:

Աշխատողների միջին ցուցակային թիվը հաշվետու տարում կազմել է 133 մարդ, իսկ նախորդ տարում՝ 151:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝

- Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նիկոսոնի փողոց, 86 տուն:

Ընկերության ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից կողմից ստացել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» գործունեության անժամկետ լիցենզիա թիվ 14778 համարով:

Ընկերությունը 2019թ ապրիլի 8-ին հաշվառվել է որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ՝ ԾՀ- 0325 ծանուցման հաշվառման սերիա-համարով:

2. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համապատասխան փոփոխությունները ներկայացված են ծանոթագրություն 2.6-ում:

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության համար որպես ֆունկցիոնալ և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ), որը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացվում են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերվող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

Ընկերությունը թիվ 16 «Վարձակալություններ» ՖՀՄՍ-ի անցման ժամանակ չի վերահաշվարկել համադրելի տեղեկատվությունը, քանի որ օգտագործել է փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ

2.6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի փոփոխություններ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՍՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից: Ընկերությունը կիրառել է ՖՀՍՍ 16-ն օգտագործելով պարզեցված հետընթաց մոտեցումը, համաձայն որի ստանդարտը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Համապատասխանաբար, 2019թ. համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում, այսինքն՝ այն ներկայացվում է ինչպես նախկինում՝ ՀՀՍՍ 17-ի և համապատասխան մեկնաբանությունների համաձայն: Բացի այդ, ՖՀՍՍ 16-ի բացահայտման պահանջներն ընդհանուր առմամբ չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

2.7. Վարձակալություններ

2.7.1.2019թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Ընկերությունն օգտագործում է ՖՀՍՍ 16-ի վարձակալության սահմանումը: Այս քաղաքականությունը կիրառելի է 2019թ. հունվարի 1-ին կամ հետո կնքված պայմանագրերի համար:

2.7.2.Ընկերությունը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Ընկերությունը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները: Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Ընկերությանն չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Ընկերությունը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Ընկերությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Ընկերության գնահատականի փոփոխություն, եթե Ընկերությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար: Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո: Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

2.7.3.Ընկերությունը՝ որպես վարձատու

Ինչպես համադրելի, այնպես էլ հաշվետու տարում Ընկերությունը վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

2.7.4.Նախքան 2019թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն

Համադրելի ժամանակաշրջանում վարձակալությունները, որոնց շրջանակում փոխանցվում էին սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որպես վարձակալ Ընկերությունը դասակարգում էր որպես ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները սկզբնապես չափվում էին իրական արժեքից և նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնով: Նվազագույն վարձավճարներն այն վճարներն էին, որոնք վարձակալության ժամկետի ընթացքում պահանջվում կամ կարող էին պահանջվել վարձակալից՝ առանց պայմանական ռենտաների: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվները հաշվառվում էին այդ ակտիվի համար կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Այլ վարձակալությունների շրջանակում պահվող ակտիվները դասակարգվում էին որպես գործառնական վարձակալություն և ճանաչվում էին Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում էին շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

2.7.5. ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալություն

Նախկինում Ընկերության կողմից ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունները ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ վարձակալության այս պայմանագրերի գծով պարտավարությունները չափվել են մնացած վարձավճարների ներկա

արժեքով՝ զեղչված Ընկերության լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է այն գումարով, որը հավասար է վարձակալության գծով պարտավորությանը՝ ճշգրտված վարձակալության գծով կատարած կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով: Ընկերությունը ստուգել է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկված լինելը ստանդարտին անցման ամսաթվին և եզրահանգել է, որ չկա օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման հայտանիշ:

Նախկինում ՀՀՍՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալության պայմանագրերի նկատմամբ Ընկերությունը կիրառել է մի շարք գործնական բնույթի պարզեցումներ: Մասնավորապես, Ընկերությունը՝

- չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավարություններ փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով,
- չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այն վարձակալությունների հետ կապված, որոնց դեպքում վարձակալության ժամկետն ավարտվում է սկզբնական ճանաչման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում,

2.7.6. ՖՀՍՍ 16-ին անցման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա

ՖՀՍՍ 16-ին անցնելիս Ընկերությունը ճանաչել է ստորև ներկայացված լրացուցիչ իրավունքի ձևով ակտիները և լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները: ՖՀՍՍ 16-ի սկզբնական կիրառումը կուտակային ազդեցություն չի ունեցել չբաշխված շահույթի վրա:

Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տանդարտին անցման ազդեցությունը:

	հազ. դրամ 01.01.2019
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	148,227
Վարձակալության գծով պարտավորություններ	(148,227)

Որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունների գծով պարտավորությունները չափելիս Ընկերությունը վարձավճարները զեղչել է լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Կիրառված միջին կշռված դրույքը կազմում է 12.5 %:

	հազ. դրամ 01.01.2019
Չզեղչված վարձակալության գծով պարտավորություն	334,656
Ընկերության՝ որպես վարձակալի միջին կշռված լրացուցիչ փոխառության դրույք 12.5%	12.5%
2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորություններ	148,227

2.8. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:
Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կրոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել : Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է : Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես :

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը : Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին :
Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Շենք, շինություն	20	5.0
Կառուցվածքներ	20	5.0
Մեքենաներ և սարքավորումներ	8-10	10.0-12.5
Տրանսպորտային միջոցներ	10	10.0
Արտադրական, տնտեսական գույք	10	10.0
Համակարգչային և հաշվողական տեխնիկա	1	100.0

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում :

Ոչ նյութական ակտիվները գնահատվել են սկզբնական /ձեռք բերման, ներստեղծման/ արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա:
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հաշվեգրվել է գծային արժենվազեցման մեթոդով:
Ոչ նյութական ակտիվների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները:

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Լիցենզիաներ	1	100.0

2.9. Ներդրումային գույք

Ներդրումային գույք, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և /կամ/ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը : Սկզբնական ճանաճումից հետո ներդրումային գույքը չափվում է ինքնարժեքի մոդելով :

Ներդրումային գույքի մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում:
Ներդրումային գույքի համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Շենք	20	5.0

2.10 Պաշարներ

Պաշարները չափվել են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:
Պաշարների ելքագրման ժամանակ Ընկերության կողմից օգտագործվել է առաջին մուտք առաջին ելք (ՖԻՖՕ) մեթոդը:

2.11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Որպես դրամական միջոցներ են ճանաչվել դրամարկղում առկա կանխիկ դրամը, Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվները (ազգային արժույթով և արտարժույթով): Դրամական միջոցների մասին հաշվետվությունը կազմվել է ուղղակի մեթոդով:

2.12 Առևտրային և այլ դեբիտորական ու կրեդիտորական պարտքեր

2.12.1. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ

առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:
Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքերի հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում: Հաշվետու տարում Ընկերությունը դեբիտորական պարտքերի պահուստ չի ձևավորել՝ կասկածելի պարտքերի բացակայության պատճառով:

2.12.2. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով. հետագայում չափվում են ամորտիզված արժեքով:

2.13. Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, զեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:

Ընկերությունը ապրանքի վաճառքից հասույթը ճանաչում է այն ժամանակ, երբ հետևյալ բոլոր պայմանները բավարարված են.

1. Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու օգուտները,
2. Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:
3. հասույթի գումարը կարող է չափվել արժանահավատորեն,
4. հավանական է, որ գործարքի հետ ասոցիացված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
5. Գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները կարող են չափվել արժանահավատորեն:

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

1. հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
2. հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
3. հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը
4. հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները

2.14. Արտարժույթի փոխարկումներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,
- արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ «այլ ֆինանսական հոդվածներ» տողում:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2019	31.12.2018
1 ԱՄՆ դոլար	479.7 ՀՀ դրամ	483.75 ՀՀ դրամ
1 ռուբլի	7.77 ՀՀ դրամ	6.97 ՀՀ դրամ

2.16 Արժեզրկում

2.16.1 Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Ընկերությունը դիտարկում է արժեզրկման վկայությունն անհատական և խմբային հիմունքներով:

Բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

2.16.2 Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

2.17. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես ածանցյալ դեպքերի արդյունք, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը:

2.18. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությաբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե ընկերությունը ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների,հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

2.19. Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնաբանություններն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում,
- «Բիզնես» տերմինի սահմանում (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ),
- «Էական» տերմինի սահմանում (ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ),
- ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր»:

3. Հիմնական միջոցներ

հազ. դրամ

	Հողամասեր	Շենքեր և շնություններ	Վարձակալված գույքի բարելավում	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Առ 01.01.2019թ.	44,050	4,160	294,831	132,062	71,594	36,163	582,860
Գնում	-	-	-	18,333	15,920	5,803	40,056
Օտարում	-	-	-	-	(13,698)	-	(13,698)
Առ 31.12. 2019թ.	44,050	4,160	294,831	150,395	73,816	41,966	609,218
Մաշվածություն							
Առ 01.01.2019թ.	-	1,266	63,022	71,096	42,446	28,293	206,122
Հաշվարկ	-	208	14,742	11,288	5,442	1,864	33,544
Օտարում	-	-	-	-	(4,582)	-	(4,582)
Առ 31.12.2019թ.	-	1,474	77,763	82,384	43,306	30,157	235,085
Հաշվեկշռային արժեք							
Առ 31.12.2018թ.	44,050	2,894	231,809	60,966	29,148	7,870	376,738
Առ 31.12.2019թ.	44,050	2,686	217,068	68,011	30,510	11,809	374,134

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկվել է 33,544հազ. դրամի մաշվածություն, որից 17,267 հազ. դրամը ներառվել է կատարված աշխատանքների ինքնարժեքում, 1,535 հազ. դրամը՝ վարչական ծախսերում, իսկ 14,742 հազար դրամը վերաբերվել է գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցներին:

Համադրելի տարվա ընթացքում հաշվարկվել է 33,005 հազ. դրամի մաշվածություն, որից 15,710 հազ. դրամը ներառվել է կատարված աշխատանքների ինքնարժեքում, 2,553 հազ. դրամը՝ վարչական ծախսերում, իսկ 14,742 հազար դրամը վերաբերվել է գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցներին:

4. Ներդրումային գույք

	Շենքեր և շինություններ	հազ. դրամ Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01.01.2019թ.	225,500	225,500
Գնում	-	-
Օտարում	-	-
Առ 31.12.2019թ.	225,500	225,500
Մաշվածություն		
Առ 01.01.2019թ.	62,200	62,200
Հաշվարկ	11,275	11,275
Օտարում	-	-
Առ 31.12.2019թ.	73,475	73,475
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2018թ.	**163,300**	**163,300**
Առ 31.12.2019թ.	**152,025**	**152,025**

Ներդրումային գույքի համար հաշվետու և համադրելի տարում հաշվարկվել է 11,275 հազար դրամ մաշվածություն, որն ամբողջությամբ ներառվել է այլ ծախսերում: Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է ակտիվի արժեքի աճի նպատակով պահվող անշարժ գույք:

5. Վարձակալություն

5.1. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	հազար դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2019թ	148,227
Ժամանակաշրջանի մաշվածության գումար	(9,905)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2019թ	138,322

5.2 Վարձակալության գծով պարտավորություն

	հազար դրամ 31.12.2019
Չզեղչված վարձակալության գծով վճարվելիք գումար	312,285
Չկրած տոկոսային ծախսեր	(167,900)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2019թ	144,385

5.3 Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	հազար դրամ 2019
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն	(9,905)
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	(18,528)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ենթավարձակալությունից եկամուտներ	51,837

5.4 Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	հազար դրամ 2019
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(8,316)
Վարձակալության պարտավորությունների զեղչումից տոկոսների վճարումներ	(18,528)

6. Հետաձգված հարկային ակտիվներ

հազ. դրամ

Հետաձգված հարկեր	31.12.2018	Շահույթում կամ վնասում ճանաչված	31.12.2019
Փոխհատուցելի բացակայությունների պահուստի գծով	1,194	205	1,399
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով	-	(24,898)	(24,898)
Վարձակալության պարտավորությունների գծով	-	25,989	25,989
Ընդամենը	1,194	1,296	2,490

7. Պաշարներ

հազ. դրամ

	31.12.2019	31.12.2018
Վաճառքի համար նախատեսված անավարտ բազմաբնակարան շենք	1,148,236	373,388
Ընդամենը	1,148,236	373,388

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ

	31.12.2019	31.12.2018
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	163,702	96,014
Տրված ընթացիկ կանխավճարներ	80,570	49,915
Ընդամենը	244,272	145,929

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

		հազ. դրամ
	31.12.2019	31.12.2018
Ազգային արժույթի դրամարկղ	11,296	23,474
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	2,028,219	413,751
Ընդամենը	**2,039,515**	**437,225**

Բանկային հաշվում առկա դրամական միջոցներից 1,651,821 հազար դրամը Ընկերության կողմից կառուցվող բազմաբնակարան շենքերի բնակարանների դիմաց ստացված կանխավճարների մի մասն է, որը գտնվում է կառուցապատողի հատուկ հաշվում: Կառուցապատողի հատուկ հաշվում գտնվող գումարից հաշվետու տարվա վերջի դրությամբ հասանելի գումարը կազմում է 262,598 հազար դրամ, իսկ մնացած գումարները Ընկերության կողմից չեն կարող օգտագործվել մինչև բազմաբնակարան շենքերի շահագործման հանձնելը: Կառուցապատողի հատուկ հաշվի դրական մնացորդի վրա հաշվեգրվում են տոկոսներ (տես՝ծանոթագրություն 20):

10. Սեփական կապիտալ

10.1. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 60 հազար դրամ, որն ամբողջությամբ վճարված: Ընկերության 25% բաժնեմասերի սեփականատեր է հանդիսանում Գառնիկ Ավետիսյանը, իսկ 75%-ինը՝ Դավիթ Մեղրակյանը:

10.2. Չբաշխված շահույթ և շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2019 թվականին Ընկերությունը շահաբաժիններ չի հայտարարել և չի վճարել:

11. Վարկեր և փոխառություններ

		հազ. դրամ
	31.12.2019	31.12.2018
Երկարաժամկետ բանկային վարկեր	560,367	227,136
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**560,367**	**227,136**
Երարաժամկետ բանկային վարկերի ընթացիկ մաս	202,300	85,145
Բանկային վարկերի գծով հաշվեգրված ընթացիկ տոկոսներ	3,699	1,112
Փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	200,000	648,666
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**405,999**	**734,923**
Ընդամենը ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ	**966,366**	**962,059**

Կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը ստացվել են սեփական և երրորդ անձանց պատկանող գույքերի գրավով ապահովված վարկերից և վարկային գծերի տրամադրումից: Ինչ վերաբերվում է կարճաժամկետ փոխառություններին, ապա այն ստացվել է ընկերության տնօրեն և մասնակից Գառնիկ Ավետիսյանից՝ անտոկոս և գրավով չապահովված ցպահանջ փոխառության պայմանագրի հիման վրա:

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ

	31.12.2019	31.12.2018
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	218,582	192,637
Ստացված ընթացիկ կանխավճարներ	2,464,362	173,926
Ընդամենը	**2,682,944**	**366,563**

Ստացված ընթացիկ կախավճարներից 2,309,327 հազար դրամը Ընկերության կողմից կառուցման ընթացքում գտնվող բազմաբնակարան շենքերի բնակարանների դիմաց ստացված կանխավճարներն են:

13. Ընթացիկ պահուստներ

հազ. դրամ

	Արձակուրդայինի պահուստ
Մնացորդ առ 31.12.2018թ.	5,968
Տարվա ընթացքում ձևավորված պահուստներ	7,772
Տարվա ընթացքում օգտագործված պահուստներ	5,968
Մնացորդ առ 31.12.2019թ.	7,772

14. Հասույթ

հազ. դրամ

	- 2019 -	- 2018 -
Աշխատանքների կատարումից հասույթ	1,462,219	1,613,927
Ընդամենը	**1,462,219**	**1,613,927**

15. Ինքնարժեք

հազ. դրամ

	- 2019 -	- 2018 -
Կատարված աշխատանքների ինքնարժեք, այդ թվում՝	1,168,403	1,279,834
- Օգտագործված հումք և նյութեր	854,973	890,968
- Աշխատանքի վճարման և գործուղման ծախսումներ	200,744	237,999
- Ստացված ծառայությունների ինքնարժեք	85,033	135,157
- Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսումներ	25,263	15,710
Ընդամենը	**1,166,013**	**1,279,834**

16. Այլ եկամուտներ

	- 2019-	հազ. դրամ - 2018-
Այլ պաշարների օտարումից եկամուտներ	196	3,946
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	-	31,940
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ենթավարձակալությունից եկամուտներ	51,837	-
Այլ եկամուտներ	134	265
Ընդամենը	**52,167**	**36,151**

17. Իրացման ծախսեր

	- 2019-	հազ. դրամ - 2018-
Ապահովագրական ծախսեր	1,539	1,135
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	4,556	1,370
Իրացման այլ ծախսեր	754	436
Ընդամենը	**6,849**	**2,941**

18. Վարչական ծախսեր

	- 2019 -	հազ. դրամ - 2018 -
Աշխատանքի վճարման ծախսեր	44,538	30,675
Հիմնական միջոցների մաշվածություն	1,535	2,553
Աուդիտորական և հաշվապահական ծախսեր	5,200	5,370
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,887	1,202
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	2,114	2,455
Չփոխհատուցվող հարկերի և տուրքերի գծով ծախսեր	1,820	1,295
Վարչական այլ ծախսեր	4,312	5,237
Ընդամենը	**61,406**	**48,787**

19. Այլ ծախսեր

		հազ. դրամ
	- 2019-	- 2018-
Այլ պաշարների օտարումից ծախսեր	196	3,494
Գործառնական վարձակալությամբ տրված գույքի բարելավումների գծով մաշվածություն	14,742	14,742
Օգտագործման իրավունքի ձևի ակտիվների մաշվածություն	9,905	-
Գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցների ենթավարձակալության գծով ծախսեր	-	22,270
Գործառնական վարձակալությամբ տրված օգտագործման իրավունքով ակտիվների սպասարկման ծախսեր	12,704	-
Գործառնական վարձակալությամբ տրված տարածքների սպասարկման ծախսեր	-	13,224
Ներդրումային գույքի մաշվածություն	11,275	11,275
Հիմնական միջոցների օտարումներից վնասներ	1,616	-
Այլ ծախսեր	3,886	967
Ընդամենը	**54,324**	**65,972**

20. Ֆինանսական ծախսեր

		հազ. դրամ
	- 2019 -	- 2018 -
Վարկերի գծով տոկոսային ծախսեր	65,061	40,717
Վարձակալության պարտավորության չեղչումից տոկոսային ծախս	18,528	-
Ընդամենը	**83,589**	**40,717**

21 Ֆինանսական եկամուտներ

		հազ. դրամ
	- 2019 -	- 2018 -
Բանկային տոկոսներից եկամուտներ	34,620	7,189
Ընդամենը	**34,620**	**7,189**

22. Շահութահարկի գծով ծախս

		հազ. դրամ
	-2019-	-2018-
Ընթացիկ հարկի գծով ծախս	(39,793)	(45,116)
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	1,297	(648)
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(38,496)**	**(45,764)**

ՀՀ տարածքում գործունեության համար 2019թ. շահութահարկ հաշվարկելիս ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրառվել է 20 % դրույքաչափը, իսկ 2020թ-ից կիրառվելու է 18% դրույքաչափը:

22.1.Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	2019		2018	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	178,546	100%	221,208	100%
Շահութահարկ՝ հաշվարկված 20% դրույքաչափով	35,709	20%	44,242	20%
Չնվազեցվող/(չհարկվող) հոդվածներ	20,419	-11.4%	4,372	-2.0%
Հարկվող շահույթ	198,965	111%	225,580	102%
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ հաշվարկված 20% դրույքաչափով	39,793	22.3%	45,116	20.4%

23. Կապակցված կողմերի բացահայտում

23.1. Վերահսկողություն

Վերահսկողությունը կազմակերպության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը որոշելու կարողությունն է՝ դրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Ընկերության մասնակից Գառնիկ Ավետիսյանի հետ ֆինանսական տարվա ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

Ստացված փոխառություններ	հազ. դրամ
Մնացորդ առ 01.01.2019թ.	600,000
Մուտքեր	-
Մարումներ	400,000
Մնացորդ առ 31.12.2019թ.	200,000

Ինչպես արդեն նշված է ծանոթագրություն 10-ում՝ ստացված փոխառությունները ցպահանջ են, տրամադրվել են առանց գրավի և տոկոսի:

23.2. Ղեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ստացված վարձատրությունը՝ առանց հարկերի, պարտադիր այլ վճարների:

	-2019-	-2018-
Ղեկավար անձնակազմի աշխատանքային հատուցումներ	7,919	5,749

24. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Ընկերության համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները:

Ընկերության պարտքային ռիսկը կապված է վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մարման հետ: Ընկերության վաճառքների գծով դեբիտորական պարտքերի վերլուծությունը վկայում է տարեվերջի դրությամբ պարտքային ռիսկի միջին մակարդակի մասին:

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Ստորև ներկայացված է ընկերության ակտիվների իրացվելիության վերլուծությունը

հազ. դրամ

	31-12-19	31-12-18
Ընթացիկ ակտիվներ	3,452,246	971,070
Ընթացիկ պարտավորություններ	3,101,714	1,107,876
Ընթացիկ իրացվելիության գործակից	1.1	0.9
Արագ իրացվելի ակտիվներ*	2,304,009	597,681
Ընթացիկ պարտավորություններ	3,101,714	1,107,876
Արագ իրացվելիության գործակից	0.7	0.5
Դրամական միջոցներ և համարժեքներ	2,039,515	437,225
Ընթացիկ պարտավորություններ	3,101,714	1,107,876
Բացարձակ իրացվելիության գործակից	0.66	0.39

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվում են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ պաշարների:

գ) Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները ավելի կամ պակաս են նույն արժույթով արտահայտված պարտավորություններից: Ընկերությունում արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը մեծամասամբ առաջանում է արտարժույթով ստացված վարկերից:

Ընկերության արտարժութային մնացորդներն ունեն հետևյալ տեսքը.

	31/12/2019		31/12/2018	
	RUB	USD	RUB	USD
Արտարժութային ակտիվներ	1,995,307	1,117	1,609,685	1,117
Արտարժութային պարտավորություններ	659,990	50	2,373,850	70,000
Զուտ արդյունք	1,335,317	1,067	-764,165	-68,883

Ընկերության ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն ըստ արժույթների վկայում է տարեվերջի դրությամբ արտարժույթի ռիսկի ենթարկվածության մասին:

25. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հա

ճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի երրորդ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված վարկային երաշխավորություններ 6,670 հազար ԱՄՆ դոլարի և 4,011,000 հազար ՀՀ դրամի չափով:

ե) Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը ստացված վարկերի դիմաց գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը՝ գնահատված 773,720 հազար դրամով, ինչպես նաև 38,876 հազար դրամ գնահատված արժեքով էքսկավատոր: